ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

With funding from
Austrian
Development
Cooperation

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԹՎԱՅՆԱՑՎԱԾ

ՆՈՐԱՐԱՐ

ԽԵԼԱՑԻ

www.mineconomy.am

ԵՐԵՎԱՆ 2020

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երկրորդ միջոցառման շրջանակներում, պետության կողմից սուբսիդավորման արդյունքում, **մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը** տրամադրվող վարկերի համար սահմանված են հետևյալ պայմանները.

Կապիտալ ներդրումների ծավալների ավելացման, արտադրական հզորությունների ընդլայնման, տնտեսությունների խոշորացման ու զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման նպատակներով ֆիզիկական և իրավաբանական անձանց համար՝

- ✓ **0 %** տոկոսադրույք.
- ✓ վարկի գումարը՝ **3-15 մլն ՀՀ դրամ**, ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման ու ավանդական այգու հիմնման համար՝ **3-30 մլն ՀՀ դրամ**, տավարաբուծության զարգացման համար՝ **3-50 մլն ՀՀ դրամ**.
- ✓ վարկի մարման ժամկետը՝ մինչև 5 տարի, ավանդական այգու հիմնման նպատակով տրամադրվող վարկերի դեպքում՝ մինչև 7 տարի, խոզաբուծության և թռչնաբուծության զարգացման համար տրամադրվող վարկերի դեպքում՝ մինչև 3 տարի.
- ✓ մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ մինչև 12 ամիս, ավանդական այգու հիմնման նպատակով տրամադրվող վարկերի դեպքում՝ առավելագույնը 4 տարի:

*Գյուղատնտեսական կոոպերատիվներին պետության կողմից կարող է տրամադրվել նաև **10 %** համաֆինանսավորում*, իսկ ֆիզիկական անձանց՝ խոզաբուծության, թռչնաբուծության, ոչ տոհմային ոչխարաբուծության ու այծաբուծության զարգացման նպատակով՝ **30 %:***

Գյուղատնտեսության ոլորտում գործունեության նպատակով ֆիզիկական անձանց տրամադրվող միկրովարկերի համար՝

- ✓ **0 %** տոկոսադրույք.
- ✓ վարկի գումարը՝ մինչև **1 մլն ՀՀ դրամ**.
- ✓ վարկի մարման ժամկետը՝ մինչև **2 տարի**.
- ✓ մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ մինչև **9 ամիս**:

* Համաֆինանսավորման կարգը և գյուղատնտեսական կոոպերատիվների ծրագրերին դիմելու ընթացակարգը տեսնել՝ էջ 30-31:

ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

- «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
- «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ
- «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
- «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
- «ԱՆԻՎ» ՈՒՎԿ ՍՊԸ
- «ԱԳՐՈԼԻԶԻՆԳ ԼՎԿ» ՍՊԸ
- «ԿԱՄՈՒՐՋ» ՈՒՎԿ ՓԲԸ
- «ՔԱՐԴ ԱԳՐՈԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ
- «ՖԱՐՄ ԿՐԵԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ» ՈՒՎԿ ԱԿ
- «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
- «ՖԱՍՏ ԿՐԵԴԻՏ ԿԱՊԻՏԱԼ» ՈՒՎԿ ՓԲԸ
- «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ
- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ» ՈՒՎԿ ՓԲԸ

ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՅԼԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՔԱՅԼ 1

Տնտեսավարողը դիմում է ֆինանսական կառույցին

ՔԱՅԼ 2

Ֆինանսական կառույցի վարկունակության պահանջը բավարարելու դեպքում տնտեսավարողը մասնակցում է Նախարարության կողմից կազմակերպվող դասընթացին և ստանում հավաստագիր

ՔԱՅԼ 3

Հավաստագիրը ներկայացնում է ֆինանսական կառույցին և կնքում պայմանագիր

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 011 524 610, 011 525 232

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ՝ ԼԻԶԻՆԳԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի շրջանակներում տնտեսավարողները հնարավորություն ունեն լիզինգով ձեռք բերել նոր գյուղատնտեսական տեխնիկա:

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երկրորդ միջոցառման շրջանակներում, պետության կողմից սուբսիդավորման արդյունքում, **մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը** տրամադրվող լիզինգի համար սահմանված են հետևյալ պայմանները՝

- ✓ **0 %** տոկոսադրույք.
- ✓ **20 %** կանխավճար.
- ✓ ձեռք բերվող լիզինգի առարկաների ընդհանուր գումարը նույն լիզինգառուին՝ **200 մլն ՀՀ դրամ**.
- ✓ մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ տարեկան մինչև **6 ամիս**.
- ✓ մարման ժամկետը՝

- կոմբայնների համար՝ **10 տարի**,
- տրակտորների համար՝ **6 տարի**,
- հավաքիչ-մամլիչների, շարքացանների համար՝ **3-6 տարի**,
- այլ գյուղատնտեսական տեխնիկայի համար՝ **3 տարի**:

Ընդ որում՝ միևնույն շահառուին միաժամանակ տրակտորներ և այլ գյուղատնտեսական տեխնիկա լիզինգով տրամադրելու դեպքում մարման ժամկետը կարող է սահմանվել **6 տարի:**

*Գյուղատնտեսական կոոպերատիվներին պետության կողմից կարող է տրամադրվել նաև **10%** համաֆինանսավորում*, իսկ այլ տնտեսավարողներին՝ **10%** կանխավճարի համաֆինանսավորում*, բայց ոչ ավել, քան 10 մլն դրամը:*

* Համաֆինանսավորման կարգը և գյուղատնտեսական կոոպերատիվների ծրագրերին դիմելու ընթացակարգը տեսնել՝ էջ 30-31:

ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

- «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ
- «ՖԱՐՄ ԿՐԵԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ» ՈՒՎԿ ԱԿ
- «ՔԱՐԴ ԱԳՐՈԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ
- «ԱՐՄԵՆԻԱՆ ԼԻԶԻՆԳ ՔԱՄՓՆԻ» ՈՒՎԿ ՓԲԸ
- «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
- «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ» ՈՒՎԿ ՓԲԸ

ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՅԼԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՔԱՅԼ 1

Տնտեսավարողն ընտրում է տեխնիկայի տեսակը, այն արտադրողին կամ մատակարարին

ՔԱՅԼ 2

Դիմում է ֆինանսական կառույցին

ՔԱՅԼ 3

Լիզինգի առարկաների ընդհանուր գումարը 100.0 մլն ՀՀ դրամը գերազանցելու դեպքում տնտեսավարողը, մինչև լիզինգի պայմանագիր կնքելը, գրավոր տեղեկացնում է Նախարարությանը

ՔԱՅԼ 4



Ֆինանսական կառույցի պահանջները բավարարելու դեպքում կնքում է լիզինգի պայմանագիր և վճարում Ծրագրով նախատեսված 20 % կանխավճարը

ՔԱՅԼ 5

Ֆինանսական կառույցը պատվիրում է գյուղատնտեսական տեխնիկան և լիզինգով տրամադրում տնտեսավարողին

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 011 524 610, 011 525 232

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ՝ ԼԻԶԻՆԳԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երկրորդ միջոցառման շրջանակներում, պետության կողմից սուբսիդավորման արդյունքում, **մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը** տրամադրվող լիզինգի համար սահմանված են հետևյալ պայմանները՝

- ✓ **0 %** տոկոսադրույք.
- ✓ **20 %** կանխավճար.
- ✓ լիզինգի մարման ժամկետը՝ մինչև **8 տարի**.
- ✓ մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ տարեկան մինչև **6 ամիս**.
- ✓ յուրաքանչյուր լիզինգառուի կողմից ձեռք բերվող սարքավորումների արժեքների հանրագումարը՝ մինչև **450 մլն ՀՀ դրամ**:

*Գյուղատնտեսական կոոպերատիվների համար պետության կողմից կարող է տրամադրվել նաև **10 %** համաֆինանսավորում* իսկ այլ տնտեսավարողներին՝ 10% կանխավճարի համաֆինանսավորում*, բայց ոչ ավել, քան 10 մլն դրամը:*

ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՁԿՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԼԻԶԻՆԳԻ (ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ) 20% ԿԱՆԽԱՎՃԱՐԻ 50%-Ը (ԱՐԺԵՔԻ 10%) ԿԱՐՈՂ Է ՓՈԽՀԱՏՈՒՑՎԵԼ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ:

- անասնաբուծություն, այդ թվում՝ տավարաբուծություն, ոչխարաբուծություն, խոզաբուծություն, թռչնաբուծություն, մեղվաբուծություն, ձկնաբուծություն, արդյունագործական գազանաբուծություն.
- բուսաբուծություն, այդ թվում՝ ջերմատնային տնտեսություն.
- սառնարանային տնտեսություն, այդ թվում՝ կաթի մթերման կայաններ և կաթ տեղափոխող իզոթերմիկ ցիստեռներ.
- թարմ պտուղ-բանջարեղենի և հատիկաընդեղենի տեսակավորման, փաթեթավորման ու հատիկաընդեղենի զտման գործունեություն.
- սպանդանոցային տնտեսություն, շարժական և շարժական մոդուլային սպանդանոցներ, ինչպես նաև սպանդանոցային ծառայություն մատուցողի կողմից ձեռք բերվող մսեղիքի տեղափոխման տրանսպորտային միջոցներ.
- ագրովերամշակող արդյունաբերություն.
- ագրոպարենային ոլորտի այլ գործունեություն:

Միաժամանակ, ծրագրի շրջանակներում կապալառու կազմակերպության միջոցով սպանդանոցների, ջերմատնային, սառնարանային և գյուղատնտեսական նշանակության պահեստային տնտեսությունների ամբողջական ներդրումը կարող է դիտարկվել լիզինգի առարկա:

* Համաֆինանսավորման կարգը և գյուղատնտեսական կոոպերատիվների՝ ծրագրերին դիմելու ընթացակարգը տեսնել՝ էջ 30-31:

ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

- «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
- «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
- «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ
- «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
- «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ
- «ՔԱՐԴ ԱԳՐՈԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ
- «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
- «ԱՐՄԵՆԻԱՆ ԼԻԶԻՆԳ ՔԱՄՓՆԻ» ՈՒՎԿ ՓԲԸ
- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ» ՈՒՎԿ ՓԲԸ

ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՅԼԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՔԱՅԼ 1

Տնտեսավարողն ընտրում է սարքավորման տեսակը, այն արտադրողին կամ մատակարարին

ՔԱՅԼ 2

Դիմում է ֆինանսական կառույցին, որի ֆինանսական պահանջները բավարարելու դեպքում կնքում է լիզինգի պայմանագիր և վճարում Ծրագրով նախատեսված 20 % կանխավճարը

ՔԱՅԼ 3

Ֆինանսական կառույցը պատվիրում է սարքավորումը և լիզինգով տրամադրում շահառուին

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 011 524 610, 011 230 180

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՒՄՔԻ ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ (ԳՆՈՒՄՆԵՐԻ) ՆՊԱՏԱԿՈՎ ԱԳՐՈՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակում մթերումների կազմակերպման, այդ թվում՝ կանխավճարների տրամադրման, ինչպես նաև **մինչև 2020 թվականի դեկտեմբերի 30-ը** պտուղ-բանջարեղենի պահածոների արտադրության համար տարաների ձեռքբերման նպատակով վարկեր են տրամադրվում պտուղ-բանջարեղեն, խաղող և կաթ մթերող անհատ ձեռնարկատերերին և իրավաբանական անձանց, այդ թվում՝ գյուղատնտեսական կոոպերատիվներին:

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երկրորդ միջոցառման շրջանակներում, պետության կողմից սուբսիդավորման արդյունքում, **մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը** տրամադրվող վարկերի համար սահմանված են հետևյալ պայմանները՝

- ✓ **0 %** տոկոսադրույք.
- ✓ վարկի գումարը՝ մինչև **1,8 մլրդ ՀՀ դրամ**.
- ✓ վարկի մարման ժամկետը՝ մինչև **1,5 տարի**.
- ✓ մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ **2-3 ամիս**:

*Գյուղատնտեսական կոոպերատիվներին պետության կողմից կարող է տրամադրվել **30 %** համաֆինանսավորում*:*

* Համաֆինանսավորման կարգը և գյուղատնտեսական կոոպերատիվների՝ ծրագրերին դիմելու ընթացակարգը տեսնել՝ էջ 30-31:

ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

- «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
- «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
- «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
- «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
- «ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲԸ
- «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
- «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
- «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ
- «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
- «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
- «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
- «ՔԱՐԴ ԱԳՐՈԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ
- «ԱՐՄԵՆԻԱՆ ԼԻԶԻՆԳ ՔԱՄՓՆԻ» ՈՒՎԿ ՓԲԸ
- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ» ՈՒՎԿ ՓԲԸ

ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՅԼԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՔԱՅԼ 1

Վերամշակող ընկերությունը համապատասխան տնտեսությունների հետ կնքում է հումքի գնման պայմանագրեր

ՔԱՅԼ 2

Վերամշակող ընկերությունը կնքված պայմանագրերով, լրացված դիմումով և ծրագրով սահմանված Ձև 1-ով դիմում է ֆինանսական կառույցին

ՔԱՅԼ 3

Վարկունակության պահանջները բավարարելու դեպքում ֆինանսական կառույցը հաստատում է վարկի ստացման հայտը

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 011 524 610, 011 235 471

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2019-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՎԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագիրն ուղղված է ՀՀ-ում տավարաբուծությամբ զբաղվող տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես՝ վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման միջոցով տոհմային խոշոր եղջերավոր կենդանիների (ԽԵԿ) մատակարարմանը: Ծրագրի շրջանակում տնտեսավարող սուբյեկտները հնարավորություն ունեն ձեռք բերել տոհմային ԽԵԿ՝ **երինջներ և/կամ 14-17 ամսական էգ մատղաշ**, տեղական տնտեսություններից կամ ներկրել այլ երկրներից:

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երկրորդ միջոցառման շրջանակներում, պետության կողմից սուբսիդավորման արդյունքում, **մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը** տրամադրվող վարկերի համար սահմանված են հետևյալ պայմանները՝

- ✓ **0 %** տոկոսադրույք.
- ✓ վարկի մարման ժամկետը՝ մինչև **5 տարի**,
- ✓ մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ մինչև **1 տարի**,
- ✓ վարկերի հանրագումարի մնացորդը՝ մինչև **300 մլն դրամ**:

*Գյուղատնտեսական կոոպերատիվների համար պետության կողմից կարող է տրամադրվել **70 %** համաֆինանսավորում*, իսկ այլ տնտեսավարողներին՝ **30%**: 30% համաֆինանսավորումը կտրամադրվի ձեռք բերված տոհմային ԽԵԿ-ի համար տնտեսավարողի անասնաշենքում անկապ բոքսային պահվածք և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի N 369-L որոշմամբ հաստատված՝ «Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագրով» սահմանված չափորոշիչներին համապատասխան պահման պայմաններ ու անասնաշենքին համապատասխան գլխաքանակ ապահովելու դեպքում: Վերոնշյալի վերաբերյալ եզրակացություն կտրամադրվի Էկոնոմիկայի նախարարության կողմից սահմանված կարգով:*

* Համաֆինանսավորման կարգը և գյուղատնտեսական կոոպերատիվների՝ ծրագրերին դիմելու ընթացակարգը տեսնել՝ էջ 30-31:

ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

- «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
- «ԱՆԻՎ» ՈՒՎԿ ՍՊԸ
- «ԱԳՐՈԼԻԶԻՆԳ ԼՎԿ» ՍՊԸ
- «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
- «ԿԱՄՈՒՐՋ» ՈՒՎԿ ՓԲԸ
- «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
- «ՔԱՐԴ ԱԳՐՈԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ
- «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
- «ՖԱՐՄ ԿՐԵԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ» ՈՒՎԿ ԱԿ
- «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
- «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ
- «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
- «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
- «ԱՐԵԳԱԿ» ՈՒՎԿ ՓԲԸ
- «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ» ՈՒՎԿ ՓԲԸ

ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՅԼԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՔԱՅԼ 1

Տնտեսավարողը դիմում է ֆինանսական կառույցին՝ նշելով՝ ձեռք բերվող ԽԵԿ-ի քանակը, ձեռքբերման վայրը (վայրերը, հասցեն), ներմուծման դեպքում՝ ժամկետները: Միաժամանակ, Նախարարություն է ներկայացնում ձեռքբերման ենթակա ԽԵԿ-ի տոհմային վկայականները և քարտերը

ՔԱՅԼ 2

Ֆինանսական կառույցի վարկունակության պահանջները բավարարելու դեպքում վարկի գումարը անկանխիկ եղանակով, փուլ առ փուլ կամ միանվագ փոխանցվում է շահառուի հաշվեհամարին

ՔԱՅԼ 3

Տոհմային ԽԵԿ ձեռք բերելուց (ներկրելուց) հետո շահառուն ֆինանսական կառույց և Նախարարություն է ներկայացնում Ծրագրով պահանջվող փաստաթղթերը

Ծանոթություն: Տոհմային ԽԵԿ-ի անկումից և/կամ սանիտարական սպանդից կամ օտարումից հետո ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում շահառուն Նախարարություն է ներկայացնում համապատասխան տեղեկատվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՈՉԽԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԾԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակն է հանրապետությունում ոչխարաբուծության և այծաբուծության ճյուղերի զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, բարձրարժեք տոհմային ոչխարների ձեռքբերման (ներկրման) և բարձր մթերատու հոտերի ձևավորման խրախուսումը, բուծվող ցեղերի կատարելագործումը, տոհմային գործի զարգացումը, արտադրատնտեսական արժեքավոր հատկանիշներով օժտված մաքրացեղ և տրամախաչումների միջոցով ստացված խառնացեղ կենդանիների գլխաքանակի ավելացումը: Ծրագրով տոհմային մանր եղջերավոր կենդանիների (ՄԵԿ)՝ ըստ մթերատվության ուղղության (կաթնային, մսային, բրդային) ցեղերի ընտրության նկատմամբ որևէ նախապայման չի սահմանվում, բացառությամբ դրանց սեռահասակային խմբերի՝ **մինչև 18 ամսական հղի ոչխարներ և այծեր, 4-16 ամսական էգ և 6-16 ամսական արու մատղաշ (ներկրման դեպքում արտահանվող երկրում կարանտինի կանգնեցնելու, իսկ Հայաստանի Հանրապետությունում՝ առուվաճառքի պայմանագրի կնքման դրությամբ)՝ 20:1 հարաբերությամբ (20 էգի հաշվով 1 արու):**

ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄ ԲԱՂԱԴՐԻՉ 1

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երկրորդ միջոցառման շրջանակներում, պետության կողմից սուբսիդավորման արդյունքում, **մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը** տրամադրվող վարկերի համար սահմանված են հետևյալ պայմանները՝

- ✓ **0 %** տոկոսադրույք.
- ✓ վարկի մարման ժամկետ՝ մինչև **4 տարի**.
- ✓ մայր գումարի արտոնյալ ժամկետ՝ մինչև **1 տարի**.
- ✓ վարկերի հանրագումարի մնացորդը՝ մինչև **900 մլն ՀՀ դրամ**:

*Գյուղատնտեսական կոոպերատիվների համար պետության կողմից կարող է տրամադրվել **70 %** համաֆինանսավորում*, իսկ այլ տնտեսավարողներին՝ **30%**:*

* Համաֆինանսավորման կարգը և գյուղատնտեսական կոոպերատիվների՝ ծրագրերին դիմելու ընթացակարգը տեսնել՝ էջ 30-31

ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

- «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
- «ԿԱՄՈՒՐՋ» ՈՒՎԿ ՓԲԸ
- «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
- «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
- «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ
- «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
- «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
- «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ» ՈՒՎԿ ՓԲԸ

ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՅԼԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԲԱՂԱԴՐԻՉ 1

ՔԱՅԼ 1

Տնտեսավարողը դիմում է ֆինանսական կառույցին՝ նշելով՝ ձեռք բերվող ՄԵԿ-ի քանակը, ձեռքբերման վայրը, ժամկետները, ձեռքբերման ենթակա տոհմային ՄԵԿ-ի հավաստագրերը, ներմուծման դեպքում՝ ներկրման ժամկետները: Միաժամանակ Նախարարություն է ներկայացնում ձեռքբերման ենթակա տոհմային ՄԵԿ-ի հավաստագրերը

ՔԱՅԼ 2

Ֆինանսական կառույցի վարկունակության պահանջները բավարարելու դեպքում վարկի գումարը անկանխիկ եղանակով, փուլ առ փուլ կամ միանվագ փոխանցվում է շահառուի հաշվեհամարին

ՔԱՅԼ 3

Տոհմային ՄԵԿ ձեռք բերելուց (ներկրելուց) հետո շահառուն ֆինանսական կառույցին և Նախարարություն է ներկայացնում Ծրագրով պահանջվող փաստաթղթերը

Ծանոթություն: Տոհմային ՄԵԿ-ի անկումից և/կամ սանիտարական սպանդից կամ օտարումից հետո ոչ ուշ, քան 72 ժամվա ընթացքում շահառուն Նախարարություն է ներկայացնում համապատասխան տեղեկատվություն:

ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ
ԲԱՂԱԴՐԻՉ 2

Այս դեպքում փոխհատուցվում է շահառուի կողմից յուրաքանչյուր գլուխը մինչև **450 հազար ՀՀ դրամ** արժեքով ձեռք բերված ՄԵԿ-ի համար փաստացի վճարված գումարի (չհաշված տեղափոխման ծախսերը) **23 %-ը**, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված՝ սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի և գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող կոոպերատիվների կողմից մինչև **450 հազար ՀՀ դրամ** արժեքով ձեռք բերված ՄԵԿ-ի համար՝ **27%-ը:**

ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՇԱՀԱՌՈՒՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Է ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԴԻՄՈՒՄ՝ ԿՑԵԼՈՎ.

1. ՄԵԿ-ի ձեռքբերման նպատակով կնքված պայմանագրի պատճենը.
2. ձեռք բերված կենդանիների հավաստագրերը (վկայականը, քարտը).
3. կենդանիների դիմաց վճարման անդորրագրերը, հաշիվ-ապրանքագրերը.
4. կենդանիների առողջական վիճակը հավաստող անասնաբուժական վկայականը (ներկրման դեպքում՝ արտահանվող երկրում տրված ձևը ևս).
5. համայնքում կենդանիների հաշվառման մասին տեղեկանքը.
6. բանկային հաշվեհամարը.
7. գրավոր պարտավորագիրը:

ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՅԼԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԲԱՂԱԴՐԻՉ 2

ՔԱՅԼ 1



Տնտեսավարողը մինչև տոհմային ՄԵԿ-ի ձեռքբերումը դիմում է Նախարարություն՝ նշելով ձեռք բերվող տոհմային ՄԵԿ-ի քանակը, ձեռքբերման վայրը, ժամկետները՝ կից ներկայացնելով հավաստագրերը

ՔԱՅԼ 2

Տոհմային ՄԵԿ ձեռք բերելուց (ներկրելուց) հետո տնտեսավարողը դիմում է Նախարարություն՝ ներկայացնելով Ծրագրով պահանջվող փաստաթղթերը

ՔԱՅԼ 3

Դիմումը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում շահառուի տնտեսությունում իրականացվում է դիտարկում

ՔԱՅԼ 4

Փոխհատուցման գումարը փոխանցվում է շահառուի հաշվեհամարին՝ դիտարկման դրական եզրակացությունից հետո, 5 աշխատանքային օրվա ընթացքում

Ծանոթություն: Տոհմային ՄԵԿ-ի անկումից և/կամ սանիտարական սպանդից կամ օտարումից հետո ոչ ուշ, քան 72 ժամվա ընթացքում շահառուն Նախարարություն է ներկայացնում համապատասխան տեղեկատվություն:

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 011 524 610, 011 529 333

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ «ԽԵԼԱՑԻ» ԱՆԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի շրջանակում առաջարկվում է անկապ բոքսային պահվածքով անասնաշենքերի և դրանց տեխնոլոգիական ապահովման 2 տարբերակ՝

- ✓ թեթև կոնստրուկցիայով անասնաշենք.
- ✓ այլ տիպի անասնաշենք:

ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՒՄ Է 3 ՄՈԴԵԼ

1 **130-280 քառակուսի մետր** արտադրական տարածքով՝ անկապ պահվածքով առնվազն **10-15 գլուխ** կենդանու համար: Կառուցման և տեխնոլոգիական ապահովման համար ծախսերը գնահատվում են շուրջ **11 մլն ՀՀ դրամ**:

2 **281-450 քառակուսի մետր** արտադրական տարածքով՝ անկապ պահվածքով առնվազն **20-25 գլուխ** կենդանու համար: Կառուցման և տեխնոլոգիական ապահովման համար ծախսերը գնահատվում են շուրջ **23 մլն ՀՀ դրամ**:

3 **451 և ավելի քառակուսի մետր** արտադրական տարածքով՝ անկապ պահվածքով առնվազն **40-45 գլուխ** կենդանու համար: Կառուցման և տեխնոլոգիական ապահովման համար ծախսերը գնահատվում են շուրջ **35 մլն ՀՀ դրամ**:

Կառուցումն իրականացվելու է բնագավառը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանմամբ:

ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

1-ԻՆ ՄՈԴԵԼԻ ՀԱՄԱՐ	2-ՐԴ ՄՈԴԵԼԻ ՀԱՄԱՐ	3-ՐԴ ՄՈԴԵԼԻ ՀԱՄԱՐ
5.5 մլն ֏	11.5 մլն ֏	17.5 մլն ֏

Զինվորական ծառայության պարտականությունների կատարման ժամանակ մարտական հերթապահության կամ գործողությունների իրականացման արդյունքում հաշմանդամ դարձած քաղաքացիների և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված՝ սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերում գործունեություն իրականացնող տնտեսավարողների, ագրարային ոլորտի բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների համար:

1-ԻՆ ՄՈԴԵԼԻ ՀԱՄԱՐ	2-ՐԴ ՄՈԴԵԼԻ ՀԱՄԱՐ	3-ՐԴ ՄՈԴԵԼԻ ՀԱՄԱՐ
7.7 մլն ֏	16.1 մլն ֏	24.5 մլն ֏

ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՅԼԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՔԱՅԼ 1

Տնտեսավարողը դիմում է Նախարարություն՝ ներկայացնելով՝ դիմում, անձը հաստատող փաստաթղթի պատճենը և անշարժ գույքի սեփականության (օգտագործման կամ վարձակալության) իրավունքի գրանցման վկայականը, վերակառուցման դեպքում՝վերակառուցվող անշարժ գույքի լուսանկարները

ՔԱՅԼ 2

Նախարարությունը փաստաթղթերը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում իրականացնում է տեղազննություն և տնտեսավարողին տեղեկացնում անասնաբուծության վարման վերաբերյալ դասընթացին մասնակցելու մասին

ՔԱՅԼ 3

Տնտեսավարողը մասնակցում է անասնաբուծության վարման վերաբերյալ մեկշաբաթյա դասընթացին և ստանում հավաստագիր

ՔԱՅԼ 4

Տնտեսավարողը նախագիծը և հավաստագիրը ներկայացնում է Նախարարություն և կնքում պայմանագիր

ՔԱՅԼ 5

Շահառուն շինարարությունը ավարտելուց հետո դիմում է Նախարարություն՝ կցելով շինարարության ավարտական ակտը: 5-օրյա ժամկետում իրականացվում է մոնիթորինգ, որի դրական եզրակացությունից հետո 10-օրյա ժամկետում փոխհատուցման գումարի 50%-ը փոխանցվում է շահառուի հաշվեհամարին

ՔԱՅԼ 6

Տեխնոլոգիական վերազինումից հետո (պայմանագիրը կնքելու պահից առնվազն մեկ տարվա ընթացքում) շահառուն դիմում է Նախարարություն՝ կցելով ձեռք բերված և տեղադրված սարքերի մասին փաստաթղթեր: 5-օրյա ժամկետում իրականացվում է մոնիթորինգ, որի դրական եզրակացությունից հետո 10-օրյա ժամկետում փոխհատուցման գումարի մնացած 50%-ը փոխանցվում է շահառուի հաշվեհամարին

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել
011 524 610, 011 529 333, 011 530 333

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽԱՂՈՂԻ, ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՈՎ ՄՇԱԿՎՈՂ ԻՆՏԵՆՍԻՎ ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ ԵՎ ՀԱՏԱՊՏՂԱՆՈՑՆԵՐԻ ՀԻՄՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակն է այգետնկումների խթանմամբ հանրապետությունում ղաբուծության և խաղողագործության զարգացումը, խաղողի, պտղի և հատապտղի արտադրության ծավալների ավելացումը, պտուղների և հատապտուղների ներմուծման փոխարինումը և արտահանման ծավալների ավելացումը: Ծրագիրն իրականացվում է երկու բաղադրիչով.

Տրամադրվող վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորում
ԲԱՂԱԴՐԻՉ 1

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երկրորդ միջոցառման շրջանակներում, պետության կողմից սուբսիդավորման արդյունքում, **մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը** տրամադրվող վարկերի համար սահմանված են հետևյալ պայմանները՝

- ✓ **0 %** տոկոսադրույք.
- ✓ մարման ժամկետ՝ **8 տարի**.
- ✓ մայր գումարի արտոնյալ ժամկետ՝ **5 տարի**:

Վարկերը հատկացվում են **0.5-ից 100** հեկտար խաղողի, ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար:

*3 հա-ից մինչև **100 հա** այգի հիմնող գյուղատնտեսական կոոպերատիվներին կարող է տրամադրվել նաև **50 %** համաֆինանսավորում*:*

* Համաֆինանսավորման կարգը և գյուղատնտեսական կոոպերատիվների՝ ծրագրերին դիմելու ընթացակարգը տեսնել՝ էջ 30-31:

ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

- «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
- «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
- «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
- «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ
- «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
- «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
- «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
- «ՖԱՐՄ ԿՐԵԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ» ՈՒՎԿ ԱԿ
- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ» ՈՒՎԿ ՓԲԸ

ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՅԼԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԲԱՂԱԴՐԻՉ 1

ՔԱՅԼ 1

Տնտեսավարողը դիմում է ֆինանսական կառույցին

ՔԱՅԼ 2

Ֆինանսական կառույցի վարկունակության պահանջները բավարարելու դեպքում կնքվում է պայմանագիր, և վարկի գումարը անկանխիկ եղանակով, փուլ առ փուլ կամ միանվագ փոխանցվում է շահառուի հաշվեհամարին

ՔԱՅԼ 3

Տնտեսավարողը ֆինանսական կառույցին է ներկայացնում կաթիլային ոռոգման համակարգի, կարկտապաշտպան ցանցի (առկայության դեպքում) ձեռքբերման, տեղադրման, այգեհիմնման աշխատանքների և այգու 1-ին տարվա խնամքի ծախսերը հիմնավորող փաստաթղթերը, կապալառուի հետ պայմանագրի պատճենը, վճարման անդորրագիրը (առկայության դեպքում), տնկանյութի ծագումը, որակը (ներկրման դեպքում) և ձեռքբերումը հավաստող ու բուսասանիտարական փաստաթղթերը

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել

011 524 610, 011 520 457

Կատարված ծախսերի փոխհատուցում
ԲԱՂԱԴՐԻՉ 2

Ծախսերի փոխհատուցումն իրականացվում է հետևյալ սահմանաչափով՝

✓ բոլոր շահառուների համար՝ այգեհիմնման համար կատարված ծախսերի (առանց առաջին տարվա խնամքի ծախսերի) **50%-ը**:

Փոխհատուցումը տրամադրվում է **0.5-ից 10 հեկտար** խաղողի, ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար:

ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՅԼԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԲԱՂԱԴՐԻՉ 2

ՔԱՅԼ 1

Տնտեսավարողը մինչև այգեհիմնումը դիմում է Նախարարություն՝ կից ներկայացնելով տեղեկատվություն այգու տեղի, չափերի, տեսակի վերաբերյալ, ինչպես նաև այգեհիմնման ծախսերի համապատասխան հաշվարկները: 10 աշխատանքային օրվա ընթացքում իրականացվում է տեղազննություն

ՔԱՅԼ 2

Տնտեսավարողն այգեհիմնման աշխատանքների ավարտից հետո դիմում է Նախարարություն՝ ներկայացնելով կաթիլային ոռոգման համակարգի, կարկտապաշտպան ցանցի (առկայության դեպքում) ձեռքբերման, տեղադրման, այգեհիմնման աշխատանքները հիմնավորող փաստաթղթերը, կապալառուի հետ պայմանագրի պատճենը և վճարման անդորրագիրը (առկայության դեպքում), տնկանյութի ծագումը, որակը (ներկրման դեպքում) և ձեռքբերումը հավաստող ու բուսասանիտարական փաստաթղթերը

ՔԱՅԼ 3

Դիմումը ներկայացնելուց հետո 5-օրյա ժամկետում իրականացվում է մոնիթորինգ, որի դրական եզրակացության դեպքում կնքվում է պայմանագիր, որից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում փոխհատուցման գումարը փոխանցվում է շահառուի հաշվեհամարին

ՈՌՈԳՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրով նախատեսվում է գյուղատնտեսական մշակաբույսերով զբաղեցված տարածքներում (բացառությամբ ջերմատների և ջերմոցային տնտեսությունների) ոռոգման արդիական համակարգերի ներդրման համար շահառուներին տրամադրել սուբսիդավորվող վարկ կամ կատարել ծախսերի փոխհատուցում:

Շահառուի հայեցողությամբ՝ կաթիլային կամ անձրևացման համակարգերը (մոտեցնող խողովակ, գլխամասային հանգույց և բաշխիչ ցանց) կարող են տեղադրվել կամ կապալառու կազմակերպության, կամ շահառուի կողմից:

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՇԱՀԱՌՈՒԻՆ ՀԱՏԿԱՑՎՈՂ ՎԱՐԿԻ ԿԱՄ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԳՈՒՄԱՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է 1 ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ, ԱՆԿԱԽ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԻՑ, ՈՌՈԳՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՀԵՏԵՎՅԱԼ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՍԱՀՄԱՆԱՉԱՓԵՐԻ ՀԱՄԱՐ

ա. Եթե ոռոգման արդիական համակարգերի ներդրումն իրականացնում է կապալառու կազմակերպությունը (հաշվի են առնվում նաև սխեմայի կազմման և ներդրման աշխատանքները)՝

- կաթիլային ոռոգման համակարգի համար՝ **մինչև 2.2 մլն ՀՀ դրամ.**
- անձրևացման համակարգի համար՝ մինչև **2.7 մլն ՀՀ դրամ:**

բ. Եթե ոռոգման արդիական համակարգերի ներդրումն իրականացվում է առանց կապալառու կազմակերպության (հաշվի են առնվում միայն կապիտալ ծախսերը)՝

- կաթիլային ոռոգման համակարգի համար՝ **մինչև 1.6 մլն ՀՀ դրամ.**
- անձրևացման համակարգի համար՝ **մինչև 1.9 մլն ՀՀ դրամ:**

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 011 524 610, 011 530 333

Տրամադրվող վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորում
ԲԱՂԱԴՐԻՉ 1

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երկրորդ միջոցառման շրջանակներում, պետության կողմից սուբսիդավորման արդյունքում, **մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը** տրամադրվող վարկերի համար սահմանված են հետևյալ պայմանները՝

- ✓ **0 %** տոկոսադրույք.
- ✓ մարման ժամկետ՝ մինչև **3 տարի.**
- ✓ մայր գումարի արտոնյալ ժամկետ՝ տարեկան մինչև **6 ամիս**.
- ✓ վարկի առավելագույն գումարը կապալառուի միջոցով աշխատանքներն իրականացնելու դեպքում մինչև **150 մլն դրամ** է, իսկ առանց կապալառուի դեպքում՝ **110 մլն դրամ**:

Գյուղատնտեսական կոոպերատիվներին պետության կողմից կարող է տրամադրվել նաև **50 %** համաֆինանսավորում*:

ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

- ✔ **«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ**
- ✔ **«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ**
- ✔ **«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ**
- ✔ **«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ**
- ✔ **«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ**
- ✔ **«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ**
- ✔ **«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ**
- ✔ **«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ**
- ✔ **«ՖԱՐՄ ԿՐԵԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ» ՈՒՎԿ ԱԿ**
- ✔ **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ» ՈՒՎԿ ՓԲԸ**

* Համաֆինանսավորման կարգը և գյուղատնտեսական կոոպերատիվների՝ ծրագրերին դիմելու ընթացակարգը տեսնել՝ էջ 30-31

ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՅԼԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԲԱՂԱԴՐԻՉ 1

1. **Տնտեսավարողը դիմում է ֆինանսական կառույցին՝ կցելով պայմանագիր (Կապալառուի դեպքում) և նախահաշիվ**
2. **Ֆինանսական կառույցի վարկունակության պահանջները բավարարելու դեպքում կնքվում է պայմանագիր**
3. **Ֆինանսական կառույցը վարկի գումարը անկանխիկ եղանակով, փուլ առ փուլ կամ միանվագ փոխանցում է շահառուի հաշվեհամարին**

ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ
ԲԱՂԱԴՐԻՉ 2

Ծրագրի պայմաններն են՝

- ✓ փոխհատուցման չափը՝ **16 %.**
- ✓ առնվազն 3 հա հողատարածքում ներդնող կոոպերատիվների, գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում և սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի համար՝ **18 %.**
- ✓ փոխհատուցվող առավելագույն գումարը՝ **10 մլն ՀՀ դրամ**՝ աշխատանքները կապալառուի միջոցով իրականացնելու դեպքում, **8 մլն ՀՀ դրամ**՝ աշխատանքներն առանց կապալառուի իրականացնելու դեպքում.
- ✓ փոխհատուցվող առավելագույն գումարն առնվազն 3 հա հողատարածքում ներդնող կոոպերատիվներին՝ **27 մլն ՀՀ դրամ**՝ աշխատանքները կապալառուի միջոցով իրականացնելու դեպքում, **20 մլն ՀՀ դրամ**՝ աշխատանքներն առանց կապալառուի իրականացնելու դեպքում:

ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՅԼԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԲԱՂԱԴՐԻՉ 2

1. **Տնտեսավարողը համաձայնություն ստանալու նպատակով (էլեկտրոնային կամ թղթային տարբերակով) դիմում է Նախարարություն**
2. **Նախարարության համաձայնությունը ստանալուց հետո սկսվում են ներդրման աշխատանքները**
3. **Համակարգի ներդրման աշխատանքների ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում շահառուն դիմում է Նախարարություն՝ կից ներկայացնելով ծախսերը հավաստող փաստաթղթերը: Նախարարությունը դիմումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է մոնիթորինգ, որի դրական եզրակացության դեպքում փոխհատուցման գումարը փոխանցում է շահառուի հաշվեհամարին**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՐԿՏԱՊԱՇՏՊԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի շրջանակում կսուբսիդավորվեն պտղատու և խաղողի այգիներում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրված նպատակային վարկերի տոկոսադրույքները:

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երկրորդ միջոցառման շրջանակներում, պետության կողմից սուբսիդավորման արդյունքում, **մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը** 0.5 հա-ից մինչև **10 հա** խաղողի և պտղատու այգիների հակակարկտային ցանցերի ներդրման նպատակով տրամադրվող վարկերի համար սահմանված են հետևյալ պայմանները՝

- ✓ **0 %** տոկոսադրույք.
- ✓ վարկի մարման ժամկետը՝ **7 տարի**.
- ✓ մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ **1 տարի**:

*3 հա-ից մինչև **10 հա** կարկտապաշտպան ցանց ներդնող գյուղատնտեսական կոոպերատիվների համար պետության կողմից կարող է տրամադրվել նաև **50 %** համաֆինանսավորում*:*

* Համաֆինանսավորման կարգը և գյուղատնտեսական կոոպերատիվների՝ ծրագրերին դիմելու ընթացակարգը տեսնել՝ էջ 30-31:

ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

- «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
- «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
- «ՖԱՐՄ ԿՐԵԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ» ՈՒՎԿ ԱԿ
- «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ
- «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
- «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
- «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
- «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ» ՈՒՎԿ ՓԲԸ

ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՅԼԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՔԱՅԼ 1

Տնտեսավարողը դիմում է ֆինանսական կառույցին

ՔԱՅԼ 2

Վարկունակության պահանջները բավարարելու դեպքում ֆինանսական կառույցը վարկի գումարը անկանխիկ եղանակով, փուլ առ փուլ կամ միանվագ փոխանցում է շահառուի հաշվեհամարին

ՔԱՅԼ 3

Տնտեսավարողը ֆինանսական կառույցին է ներկայացնում կարկտապաշտպան ցանցային համակարգի ձեռքբերման հաշիվ-ապրանքագիրը, տեղակայման ծախսերը հիմնավորող և որակը հավաստող փաստաթղթերի պատճենները, կապալառուի հետ կնքված պայմանագրի պատճենը և վճարման անդորրագիրը (առկայության դեպքում)

ՓՈՔՐ ՈՒ ՄԻՋԻՆ ՋԵՐՄԱՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակն է փոքր և միջին ջերմատների կառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության միջոցով ավելացնել ջերմատնային տնտեսությունների մակերեսն ու արտադրանքի արտադրության ծավալները, բարձրացնել արտադրված արտադրանքի մրցունակության մակարդակը, նպաստել գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտների ավելացմանը:

ԱՌԱՋԱՐԿՎՈՒՄ Է ՋԵՐՄԱՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ 3 ՄՈԴԵԼ

1-ԻՆ ՄՈԴԵԼ	2-ՐԴ ՄՈԴԵԼ	3-ՐԴ ՄՈԴԵԼ
Միաշերտ կամ երկշերտ պոլիէթիլենային թաղանթով 300-600 քառ. մ թունելային ջերմատուն հողային հարստացված զանգվածով	Պոլիէթիլենային թաղանթով 800-3000 քառ. մ միաթռիչք կամ բազմաթռիչք ջերմատուն՝ հողային հարստացված զանգվածով	Պոլիէթիլենային թաղանթով 800-3000 քառ. մ միաթռիչք կամ բազմաթռիչք ջերմատուն՝ մշակության հիդրոպոնիկ եղանակով

Փոխհատուցման սահմանաչափը՝ 1 քառ. մ-ի համար, ՀՀ դրամ

4000 դ	8000 դ	10 000 դ

Արտոնյալ խմբի համար փոխհատուցման սահմանաչափերը՝ 1 քառ. մ-ի համար, ՀՀ դրամ

6000 դ	12 000 դ	15 000 դ

Կառուցումն իրականացվելու է բնագավառը կարգավորող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանմամբ:

Ծրագրի մասնակցության նախապայման է հանդիսանում Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամի և «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» (ICARE) հիմնադրամի հետ համատեղ կազմակերպվող ուսուցողական դասընթացների մասնակցության հավաստագիրը:

Ուշադրություն: Արտոնյալ խմբին են դասվում՝ զինվորական ծառայության պարտականությունների կատարման ժամանակ մարտական հերթապահության կամ գործողությունների իրականացման արդյունքում հաշմանդամ դարձած քաղաքացիները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված՝ սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերում գործունեության իրականացնող տնտեսավարողները, գյուղատնտեսական կոոպերատիվները, գյուղատնտեսությունում տնտեսավարող երիտասարդները (18-35 տարեկան), ագրարային ոլորտի բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններն ու գիտաարտադրական կազմակերպությունները:

ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՅԼԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1 Տնտեսավարողը դիմում է Նախարարություն՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթղթի և անշարժ գույքի սեփականության (օգտագործման կամ վարձակալության) իրավունքի գրանցման վկայականի պատճենները

2 Դիմումը ստանալուց հետո 15-օրյա ժամկետում կատարվում է տեղազննություն, որից հետո 5-օրյա ժամկետում տնտեսավարողը տեղեկացվում է պայմանագիր կնքելու կամ մերժելու վերաբերյալ

3 Պայմանագիր կնքելու առաջարկը ստանալուց հետո տնտեսավարողը մասնակցում է ջերմատնային տնտեսության վարման վերաբերյալ դասընթացներին և ստանում հավաստագիր

4 Պայմանագիր կնքելու առաջարկը ստանալուց հետո տնտեսավարողը ոչ ուշ, քան 5-ամսյա ժամկետում դիմում է Նախարարություն՝ ներկայացնելով նախագիծ, շինարարության թույլտվություն, նախագիծը թողարկող պատասխանատուի երաշխավորագիր, հավաստագիր, Կապալառուի հետ կնքված պայմանագիր (առկայության դեպքում), որից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում կնքվում է պայմանագիր

5 Ջերմատան կառուցման ավարտից հետո տնտեսավարողը դիմում է Նախարարություն՝ կից ներկայացնելով՝ ա. կապալառուի միջոցով ջերմատան կառուցման դեպքում՝ շինարարության ավարտական ակտ, կապալառուի կողմից տրված շինարարության որակի մասին երաշխավորագիր, բ. առանց կապալառուի ջերմատան կառուցման դեպքում՝ շինարարության ավարտական ակտը, ջերմատան կառուցման համար ձեռք բերված և տեղադրված կոնստրուկցիաների, նյութերի, սարքերի ու սարքավորումների ձեռքբերումը հավաստող համապատասխան փաստաթղթերը, դրանց տեխնիկական բնութագրերը և/ կամ ծագման հավաստագրերը

6 Դիմումը ներկայացնելուց հետո 20-օրյա ժամկետում կատարվում է մոնիթորինգ, որի դրական եզրակացության դեպքում 10-օրյա ժամկետում տրամադրվում է փոխհատուցում

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի շրջանակներում ապահովագրվում են ծիրանի և խաղողի այգիները, ինչպես նաև **2020 թվականի փետրվարի 5-ից**՝ դեղձի, խնձորի այգիները և հացահատիկային մշակաբույսերի (աշնանացան/գարնանացան ցորեն և գարի, վարսակ) ցանքատարածությունները, 2 ռիսկից՝

✓ **կարկուտ և հրդեհ**.
✓ **գարնանային ցրտահարություն**:

Կարկուտ և հրդեհ ռիսկից ծիրանի և խաղողի ապահովագրությունն ընդգրկում է **6 մարզ՝ Արմավիր, Արարատ, Արագածոտն, Տավուշ, Կոտայք, Վայոց ձոր**, իսկ դեղձի, խնձորի և հացահատիկային մշակաբույսերի (աշնանացան/գարնանացան ցորեն և գարի, վարսակ) ապահովագրությունը՝ ՀՀ բոլոր մարզերը: Գարնանային ցրտահարություն ռիսկից ծիրանի, խաղողի ու դեղձի ապահովագրությունն ընդգրկում է Արմավիրի և Արարատի մարզերը: Ծրագրի շրջանակներում իրականացվում է ապահովագրավճարի առնվազն **50-60 %-ի** սուբսիդավորում:

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 011 524 610, 011 525 232

Ի՞ՆՉ ԱՆԵԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

ՔԱՅԼ 1

Կատարել ինքնուրույն զննում՝ համոզվելու համար, որ այգին վնասվել է:

ՔԱՅԼ 2

Զանգահարել ապահովագրական կազմակերպությանը՝ տեղյակ պահելու համար ապահովագրական դեպքի մասին:

ՔԱՅԼ 3

Սպասել վնաս գնահատողի այցին՝ միաժամանակ կատարելով ապահովագրական կազմակերպության հրահանգները:

ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՅԼԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՔԱՅԼ 1

Տնտեսավարողները դիմում են Գյուղատնտեսությունը ապահովագրողների ազգային գործակալության անդամ ապահովագրական ընկերություններից որևէ մեկին

ՔԱՅԼ 2

Տնտեսավարողն ընտրում է մշակաբույսը, ռիսկը և ապահովագրական 5 ծածկույթներից մեկը

ՔԱՅԼ 3

Տնտեսավարողն ապահովագրական ընկերության հետ կնքում է ապահովագրական պայմանագիր

ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համաֆինանսավորումը վարկի գծով տնտեսավարողի մոտ ապահովման միջոցի ոչ բավարար մակարդակի և արժութային ռիսկի մասնակի չեզոքացման նպատակով ՀՀ կառավարության կողմից ֆինանսական կազմակերպությանը տրամադրվող անտոկոս փոխառություն է:

ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Գործընթացը կարգավորվում է ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 31-ի N 416-L որոշմամբ

- ✓ **Համաֆինանսավորվել կարող են համապատասխան պետական աջակցության ծրագրերին մասնակից ֆինանսական կազմակերպությունները:**
- ✓ **Շահառուները դիմում են ֆինանսական կազմակերպություններին՝ ներկայացնելով միջոցառման ներքո օժանդակության կոնկրետ ուղղություններով գումարների օգտագործման մասին տեղեկատվություն՝ համաձայն գյուղատնտեսության ոլորտի աջակցման գործող պետական ծրագրերի պահանջների:**
- ✓ **Ֆինանսական կազմակերպություններն իրականացնում են վարկառուների վարկունակության գնահատումը (վարկի նախահաստատում) և վարկի նախահաստատումից հետո պայմանագրով սահմանված ընթացակարգով՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ ՊՀ Գյուղական ֆինանսավորման կառույցին (այսուհետ՝ Կառույց) են ներկայացնում համապատասխան հայտը:**
- ✓ **Սույն աջակցության նպատակով վարկի նախահաստատում չի կարող իրականացվել այն դեպքում, եթե գյուղատնտեսական կոոպերատիվի փոխկապակցված անդամների փայերի հանրագումարը գերազանցում է փայատիրական կապիտալի 40%-ը: Սույն կարգի իմաստով անձինք համարվում են փոխկապակցված՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:**
- ✓ **Կառույցը ստուգում է ներկայացված հայտի համապատասխանությունը միջոցառման ներքո սահմանված պահանջներին, եթե համաֆինանսավորման ընդհանուր գումարը չի գերազանցում 15 մլն դրամը, ապա Կառույցի դրական եզրակացության առկայության դեպքում ֆինանսական կազմակերպությունները տրամադրում են վարկը:**
- ✓ **Գյուղատնտեսական կոոպերատիվների համար համաֆինանսավորման նախապայման է համարվում ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից սահմանված կարգով Գյուղատնտեսական կոոպերատիվի նախագահին տրված համապատասխան հավաստագրի առկայությունը:**
- ✓ **Ֆինանսական կազմակերպության կողմից 15 մլն ՀՀ դրամը չգերազանցող համաֆինանսավորման նպատակով հայտը Կառույցին կարող է ներկայացվել այն դեպքում, եթե շահառուների սեփական ֆինանսական մասնակցությունը պակաս չէ համաֆինանսավորման գումարի 30 տոկոսից:**
- ✓ **15 մլն ՀՀ դրամը գերազանցող չափով պետության համաֆինանսավորման վերաբերյալ դրական եզրակացություն տրվում է այդ մասին ՀՀ կառավարության համապատասխան որոշման ընդունմամբ:**

ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԸ ԴԻՄԵԼ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ (ԼԻԶԻՆԳԻ) ԾՐԱԳՐԵՐԻՆ

ՔԱՅԼ 1

Դիմում են ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

ՔԱՅԼ 2

Մասնակցում են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կողմից կազմակերպվող դասընթացին և ստանում հավաստագիր

ՔԱՅԼ 3

Հավաստագրի առկայությամբ դիմում են պետական աջակցության ծրագրերին մասնակից ֆինանսական կառույցներին

1. Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր
2. Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիր
3. Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիր
4. Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր
5. Հայաստանի Հանրապետությունում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման ծրագիր
6. Հայաստանի Հանրապետությունում 2019-2023 թվականների ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման պետական աջակցության ծրագիր
7. Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագիր
8. Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության ծրագիր
9. Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման ծրագիր
10. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր
11. Փոքր ու միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցության ծրագիր
12. Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագիր

ԾՐԱԳՐԵՐԻՆ ԱՌԱՎԵԼ ՄԱՆՐԱՄԱՍՆ ԾԱՆՈԹԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ.

1. Այցելեք ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայք՝
www.mineconomy.am

2. Տեղեկատվություն → Ծրագրեր → Գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրեր

3. **Զանգահարեք թեժ գիծ՝ 055 541 968 կամ**

Գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի վարչություն՝ **011 524 610** և մարզային բաժիններ՝

Արագածոտնի բաժին	055 521214
Արարատի բաժին	055 521207
Արմավիրի բաժին	055 521213
Գեղարքունիքի բաժին	055 521228
Լոռու բաժին	055 521236
Կոտայքի բաժին	055 211227
Շիրակի բաժին	055 521235
Սյունիքի բաժին	055 521238
Վայոց ձորի բաժին	055 521233
Տավուշի բաժին	055 521237

- Գյուղատնտեսության առաջնային արտադրանքի վարչություն՝ 011 529 333, 011 520 457
- Գյուղատնտեսական ծրագրերի մշակման, ռեսուրսների օգտագործման և կոոպերացիայի զարգացման վարչություն՝ 011 525 232
- Պարենային անվտանգության և ագրովերամշակման զարգացման վարչություն՝ 011 230 180, 011 235 471
- Գյուղատնտեսության ծրագրերի իրականացման վարչություն՝ 011 530 333
- Սննդամթերքի անվտանգության վարչություն՝ 011 520 207

«ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ»

տեղեկատվական գրքույկում ներառված են գյուղատնտեսության ոլորտում ՀՀ կառավարության կողմից իրականացվող պետական աջակցության բոլոր ծրագրերը, որոնք նպատակաուղղված են գյուղատնտեսության կոոպերացմանը, տոհմային անասնապահության, ինտենսիվ այգեգործության, նորագույն տեխնոլոգիաներով հագեցած գյուղատնտեսության զարգացմանը:

Ծրագրերի հիմքում երկրում բարձրարժեք, նորարար, արտահանմանը միտված, արդյունաբերական գյուղատնտեսության խթանման տեսլականն է, որը շահառուներին հնարավորություն կտա ստեղծել և ժամանակակից աշխարհի պահանջներին համաքայլ զարգացնել իրենց ագրոբիզնեսը: Տեղեկատվական գրքույկում կարող եք ծանոթանալ ծրագրերի պայմաններին, դիմելու ընթացակարգերին: Մանրամասների համար այցելեք ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայք՝ **www.mineconomy.am**, որտեղ կգտնեք նաև յուրաքանչյուր ծրագրի վերաբերյալ առանձին խորհրդատվական տեսանյութեր:

ԱՅՍ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ ՊԱՏՐԱՍՏՎԵԼ Է ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ «ԵՄ ԿԱՆԱՉ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (EU-GAIA)» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ: ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Է ԿՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ԵՎ ՊԱՐՏԱԴԻՐ ՉԷ, ՈՐ ԱՅՆ ԱՐՏԱՀԱՅՏԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ: